

**«Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» թիվ 5222-ԱՄ վարկային ծրագիր
Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկ (ՀՀ ԱՆ
ԱԾԻԳ ՊՀ) Հետաքրքրություն ներկայացնելու հրավեր
(Խորհրդատվական ծառայություններ-Անհատ խորհրդատուի ընտրություն)**

Վերնագիր: Անհատ խորհրդատու՝ շինարարական աշխատանքների աջակցության և համակարգման նպատակով

Ծածկագիր: CR4/B-C/IC/036-20

Դրույք: Լրիվ օր

Իրավասություն: Բոլոր խորհրդատուները որոնք համապատասխանում են նշված պահանջներին

Սկիզբ: 10 Օգոստոս, 2020թ.

Տևողություն: 26 ամիս

Տեղակայում: Երևան, ՀՀ

Աշխատանքի նկարագիր: Սույնով ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ն, որը ֆինանսավորում է ստանում Համաշխարհային Բանկից, Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամից և ՀՀ Կառավարությունից հրավիրում է Անհատ խորհրդատուի՝ շինարարական աշխատանքների աջակցության և համակարգման նպատակով միանալ թիմին:

Աշխատանքային պարկատանություններ:

- Չափագրել շին. աշխատանքների փաստացի ծավալները;
- Իրականացնել հսկողություն կառուցվող օբյեկտների շինարարական-մոնտաժային աշխատանքների, ինչպես նաև օգտագործվող շինանյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների հաստատված նախագծի՝ գործող նորմերի ու ստանդարտների համապատասխանությունը ապահովելու նպատակով;
- Համագործակցելով թիմի մյուս անդամների հետ կազմել տեխնիկական առաջադրանքներ՝ նախագծման, շին. աշխատանքների և տեխ. վերահսկողության պայմանագրերի համար;
- Իրականացնել այցելություններ շին. աշխատանքների ընթացքում (ներառյալ տեխնիկական վերահսկողության և նախագծային առաջադրանքների համար);
- Իրականացնել վերահսկողություն շին. աշխատանքների, հեղինակային հսկողության և տեխնիկական վերահսկողության նկատմամբ;
- Համագործակցելով ընտրված կազմակերպությունների հետ կազմել նախատեսվող շին. աշխատանքների պլանավորում, ինչպես նաև համագործակցել այլ պետական մարմինների և շահագրգիռ կողմերի հետ՝ ծրագրերի իրականացման ընթացքում առաջացած խնդիրները լուծելու նպատակով;
- Կատարել նշումներ և զեկուցել շին. աշխատանքների վերաբերյալ դիտարկումների, առաջարկությունների և բաց թողումների (սխալների) վերաբերյալ;
- Պատրաստել ցանկ՝ չավարտված շին. աշխատանքների և նրանց ավարտի ժամկետների վերաբերյալ;
- Վերլուծել բուժ. հաստատությունների տիպային նախագծերը, մասնավորապես՝ հատակագծային լուծումները, ճակատները;

- Իրականացնել «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային թիվ 5222-ԱՄ ծրագրի «Ընտրված հիվանդանոցների արդյունավետության և որակի բարելավման» բաղադրիչի շրջանակներում տնօրենի կողմից հանձնարարվող այլ աշխատանքներ:

Պահանջվող որակավորում:

- Բարձրագույն կրթություն շինարարության ոլորտում, և/կամ ինժեների մասնագիտություն:
- Առնվազն 10 տարվա փորձառություն շինարարության ոլորտում, որից 7 տարին բնակելի, հասարակական և արտադրական շինարարության ոլորտում:
- Հայերեն լեզվի գերազանց իմացություն, ինչպես նաև Անգլերեն և Ռուսերեն լեզուների մասնագիտական բավարար իմացություն:
- Microsoft Office, մասնավորապես WORD, EXCEL ծրագրերի գերազանց իմացություն:

Վարձատրություն: Մրցակցային

Դիմելու Գործընթաց: Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք ուղարկել իրենց ինքնակենսագրականները (CV) և ուղեկցող նամակները (cover letter): procurement@healthpiu.am և info@healthpiu.am էլ. փոստերին, վերնագրում հստակ նշելով “Individual Consultant for TA and Coordination of Civil Works, CR4/B-C/IC/036-20”.

Սկսած: 13 Հուլիս, 2020թ.

Վերջնաժամկետ: 23 Հուլիս, 2020թ.

Կազմակերպության մասին: ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ը հիմնադրվել է 1999 թվականին, իսկ պետական հիմնարկի կարգավիճակ է ստացել ՀՀ Կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ին թիվ 765 որոշման համաձայն: ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ն աջակցում է ՀՀ Առողջապահության նախարարությանը և պատասխանատու է առողջապահական ծրագրերի ընդհանուր համակարգման, պլանավորման, կառավարման, վերահսկման, ներառյալ գնումների ու ֆինանսական գործառնությունների իրականացման համար: **Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել <https://healthpiu.am/> վեբ կայք:**